

УРАЛЬ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնատր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կողպէկ արժաթ: Յայտարարութիւնները տպւում են հայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիաերէն, գերմաներէն եւ թուրքերէն:

ԱՌԱՋԻՆ՝ ՏԱՐԻ

ար, աւելացնում է
)), յղպիւի նահատակութիւնը լինէն լէրջ տուեց
 արութեան ըստարեական հոգստական լինէն ըստ նա

նով լուրը քայլ է քայլ բացատրելով այդ պարզու-
հասն սկզբունք է միայն աշխատում ցից տալ պ.
օրբնէկն իր հայրենակիցներին, 4. 1. 1911 թ.

*) Այստեղ հեղինակը դարձնում է ուշադրու-
թյունը ընթերցողի ճիշդ տեղեկությունների փոխելու
ամառը դեպքեր խորհնային և Ղադար փարպեյին:

ար, աւելացնում է
)), յղպիւի նահատակութիւնը լինէն լէրջ տուեց
 արութեան ըստարեական հոգստական լինէն ըստ նա

կրօնը դիմելը, որ պարանոյ կամեցել են խնդրել
բայց ինքը առայց հասակաւ և առողջակալով լի-
նելով, հակառակել է, ուստի թշնամին 3, 4 անգ
վերադարձեց զինի զգել է դեմքին վերայ ու հե-
ռացել է, վերջի մէջ թողնելով սուրբ, իսկ ոտաց
քով արհաւիրած արտաքինը: Աստիկանու-
թեան և գաւառական բժշկի քննութիւնից յայտ-
նուեցաւ, որ այդ վիճակը չէ կատարուել եղեւնու-
գործութիւնը, այլ 30 օր յառաջ, որովհետեւ միայ-
նակ լինելով և պարտեղի դուռը բաց, արդէն շուն-
կ և կատուն դիակի մի կողմը կրծելով, փորտալիքը
տարել են:

Ընտանեաց անդամի ցաւալի դրութիւնները
յուրաքանչեւ են մեր դաղթական ժողովրդեան ծը-
նողաց տգիտութիւնից, որ իրենցից դաւանելով
պատկուտ են միմեանց բողոքովն անձանօթ ան-
ձանց հետ, որք միայն առաջատար դիւրը տե-
սութիւն կանեն, սուտի սէրերը մէկըմէկու չը փա-
թաթելով, այդ օրից կոխուն ատել և միմեան ի մեծ
ատել: Այս կերպ նշանուած էր հանգուցեալը Յա-
կոբեանցի Սարգիս աղայի դասեր հետ, ինքը
կարին լինելով, իսկ հարսնացուն Ախալցխայ:
Փետայի սէրը չը միանալով ամուսնոյ հետ, պրտա-
կուած օրից սկսում են ատել: Երկու անգամ կեն-
քը փախչի իւր ծնողաց ատելը, հաշտեցնելով կը
միաւորուին, բայց անցեալ բարեկեցական օրերը
երբորդ անգամ իւր օրոյցով կը փախչի ծնողաց
զիրէ: Այս պատճառաւ իւրաքանչիւր իւր ճիգը
գործադրում է վրէժխնդիր լինել երկու կողմից
ևս խնդիրներ կը դրուին դատաստանատունը, նը-
շաններ կերտան, որ Պողոթնաբեկեանց յարգաբա-
նալու է, քանի մի օր անցնելից յետոյ, կատար-
վում է այս մարդասպանութիւնը, ժողովրդը ան-
մեղ արեան վրէժ խնդիր է, կասկածանք ցոյց կու-
նայ հակառակորդին: Արդէն այսօր ատեն են
կանչուող Սարգիս աղայ Յակոբեանցի, իւր
օրից կարգադրու և սոցա միւս փետայ Մեղքոն
Չիլինկարեանցը: Դիակի հետ սուր ծախողը զը-
րաւոր յայտնեց, որ ինքն է ծախել այդ Չիլինկա-
րեանցին: Չիլինկարեանցի քննութիւնը առաւօ-
տեան 9 ժամից մինչև այժմ, որ 2-ին է, դեռ չի
վերջացած, գուցէ այսօր և եթ բանտարկուին:
Հարուստակութիւնը յետոյ:

Օգոստոսի 29-ին
Ախալցխայ
Յ. Գ. Արդէն երեքն են բանտարկուեցան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փառք ու պատիւ մեր հոգեւորականութեան,—
նա քանի գնում է, աւելի բարձր բարոյականու-
թեան կանօններն է հետեւում: Երբեք միայն
եկեղեցու մէջ մէկ քանաւոր և մէկ յորհացու պա-
տարագի ժամանակ վարդապետի յետ Ժ Ե Ժ
վել են: Գործը քննվում էր դատաստանի մէջ:

Եղանակը Թիֆլիսում փոխվեցաւ անպատճառ
5-ին եկաւ վերջապէս փոքր ինչ անձին: Երկու
ամսվայ սաստիկ չորութենից յետոյ, Զերմաշափը
ընկաւ մինչև 19 աստիճան ստուերում (քաղաքի
մէջ):

Եւ շուտ հաղորդում են մեղ (հակառակ ան-
ցեալ համարում սպած տեղեկութեան) որ Եւշու
ուսումնարանը, որը 15,000 ռուբլի եկամուտ ունի,
դարձեալ ուսման կողմից չափ փառ գրութեան
մէջն է:—Մենք այդ հաղորդած անգեկութեան
պատասխանատուութիւնը մեզ վերա չ ենք առնում,
բայց այնու ամենայնիւ, տեսնելով շատ ուրիշ այդ
տեսակ օրինակներ, կարծում ենք որ սա հաւա-
նական է: Առատորակ մեղանում անգլիս մուտը
ունեցող աղային դպրոցները աւելի փառ դրու-
թեան մէջն են քան բոլորովն Հասկանալիքած
խեղճ ուսումնարանները, որք պահպանվում են միայն
քանի մարդիկների ջանքերով:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ

ԵԶՈՒՏՆԵՐ ԵՒ ՌԱՄԿԱՊԵՏՈՒԹԻՆ

Եւրոպայի վերջին տարիների շարժումը
եզուիտների դէմ և մանաւանդ Գերմանիայի
վերջին անցքերը, որք հետեւանք ձեռնցան
եզուիտների միաբանութեան արժեքը պե-
տութեան սահմաններից, չեն պատահական
երեւոյթները, այլ ներքին կապ ունին ժամա-
նակի պահանջներին հետ և կարող են ժա-
մանակի նշան համարվել:

Եզուիտների արքայական երեւոյթը չէ կա-
րելի մեկնել միայն այս կամ այն աւերութեան
կամայականութեամբ,—ոչ, այդ միաբանու-
թեան ազդեցութեան բոլոր փնտր նորա աղ-

ղեցութենից ազատվելու անհրաժեշտու-
թիւնը ճանաչելու համար, հարկաւոր էր
ժողովրդի, ամբոխի մտաւոր և հասարակա-
կան զարգացումը:

Սա պատմական իրողութիւն է, որ երբ
ժողովրդը սկսում է լուսաւորվել, սկսում է
իր սեպհական, ներքին գործերի վրա ինքն
հսկել,—նա աշխատում է ազատվել հոգեւո-
րականութեան ազդեցութենից:

Եւ փոքր առ փոքր հասարակութեան
մէջ դէմ առ դէմ կանգնում են երկու ծայ-
րայեղ, միմեանց հակառակ կուսակցութիւն-
ներ, միմեանց հակառակ ոյժեր:

Առասկացութիւններից մին է հոգեւորա-
կանութիւնը, որ ժողովրդին միշտ անչա-
փահաս է համարում, կամ աւելի պարզ
խօսելու համար, որ միշտ ժողովրդի հետ
վարվում է որպէս երկխայի հետ,—միւս կու-
սակցութիւնը ռաւակապեալութիւնն է (դէ-
մոկրատի) որ պահանջում է ժողովրդի հա-
մար արտաքին ազդեցութենից ազատ գոր-
գանալու իրաւունքը, մտաւորապէս ինքնու-
րոյն կերպով կրթվելու, իր տնտեսական
և բարոյական կեանքի մէջ ինքնագործու-
թեանը դիմելու, իսկ քաղաքականապէս
ներքին կառավարութեան գործերի մէջ կա-
տարեալ ինքնակառավարութեանը հաս-
նելու:

Սա բնական է, որ իւրաքանչիւր կուսակ-
ցութիւն կամենում է տիրապետել միւսների
վրա: Դաւանապէս բնական է որ երբ մի կու-
սակցութիւն տիրապետութեան է ձգտում,
նա նախ և առաջ աշխատում է ձեռքը գցել
ամենանշանաւոր հասարակական միջոցները,
որք են մի կողմից ժողովրդի կրթութիւնը,
այսինքն ուսումնարան գրականութիւնը
և օրագրութիւնը, իսկ միւս կողմից քա-
ղաքական պաշտօնները:

Դաւանապէս ամեն կուսակցութիւնը լաւ
հասկանում է, որ ուսումնարանի մէջ կատա-
րեալ ազդեցութիւն ունենալու համար, հար-
կաւոր է զիտաւորապէս իր ձեռքը գցել այդ-
կերանց ուսումնարանները, որովհետեւ կնոջ
միջնորդութեամբ միշտ աւելի հեշտ է հաս-
նել և մարդի բարոյական տիրապետութեանը:

Այդ անուամբ ամեն կուսակցութիւնները,
այդ անուամբ և ռաւակապեալական կուսակ-
ցութիւնը և եզուիտականը,—այն դաւանա-
նութեամբ միայն, որ նպատակին հասնելու
և ազդեցութիւն ունենալու համար նոյնանից
գործ դրած միջոցները տարբեր են:

Այդ երկու միմեանց հակառակ կուսակ-
ցութիւններն նպատակները տարբեր են, ուստի
և նոյնանից գործ դրած միջոցները տարբեր
պիտի լինեն:

Միջին դարերում հիմնված եզուիտների
միաբանութիւնը նպատակ ունէ երթարկել
բոլոր քրիստոնեայ աշխարհը կաթոլիկ եկե-
ղեցու անպայման իշխանութեանը, տիրել
մարդի ուղեղի վերա, կառավարել կամաւոր
կերպով մարդի հաւատը ու համոզմունքը,
դարձնել հասարակութիւնը կարողութեան
չափ կրաւորական, իշխել մարդի խղճմանքի
վրա... և այդպէս հասնել տնչացած գա-
ղափարին, անխախտ պահպանել կաթոլիկ
եկեղեցու ամեն անհատութիւն մեզցնող
վարդապետութիւնը:

Հասկանալի է, որ այդ նպատակին հաս-
նելու համար հարկաւոր էր, զիտաւորապէս
հաշտել մարդի անհատութիւնը, ինք-
նաձանաչութիւնը, մարդի ձգտումն դէպի
ազատութիւն...

Ամենայն միջոցը այդ նպատակին հաս-
նելու համար, հետեւեալ էր. աշխատել մտքը-
նի մարդկիների թէ քաղաքական կեանքի
թէ կրթութեան գործի մէջ ամենատեսիկ
միակերպութիւնը:

Մարդիկների վերա իշխելու համար ամե-
նայն միջոցն է միակերպացնել նրանց,
զրկելով նրանց աւանանական յատկու-
թիւններից:

Այդ սկզբունքների համեմատ,—հակա-
ռակ ռաւակապեալական կուսակցութեան ըս-
կիցներին, որ զիտաւորապէս պահանջում է
մարդի համար ազատութեան ձգտելու և
մրցելու իրաւունքը,—եզուիտական կուսակ-
ցութիւնը վարվում էր թէ քաղաքական
կեանքի մէջ թէ ուսումնարանում:

Եզուիտական կուսակցութեան տնչամիները
պիտի միշտ փոխադարձ հսկողութիւն ու-
նենան միմեանց վրա, պիտի շարունակ լը-
տեսեն միմեանց վարմունքը, պիտի աշխատեն
որ անդամներից ոչ միւր իրաւունք չունե-
նայ անհատապէս գործելու, ուրիշներից տար-
բեր մտածելու, պիտի աշխատեն որ ոչ միւր
նոյնանից չը բարձրանայ ընդհանուր հասարա-
կական մակերևոյթից: Երբ նոյն հարկաւոր է
թէ քաղաքական կեանքի մէջ թէ ուսումնա-
րանում բարձր պաշտօնին իրանցից մէկին
նշանակել, նոյն այդ տեսակ պաշտօնին նշա-
նակում են: ամենամանշան բնաւորութեան,
ամենաթոյլ և կրաւորական անձին, որ նորա
վերա դարձեալ իշխել խուժը, և բարձր պաշ-
տօն վարող անձը խաղալի լինի միաբանու-
թեան ձեռքում: Մի որ և է ինքնուրոյն
արոյայտութիւն ցոյց տուող անձը իսկոյն
զգկում է իր պաշտօնից, որովհետեւ ամբողջ
խմբի վերա կարգից դուրս ընդունալ բնա-
ւորութիւնը կարող է ստուէր զցել և վնա-
սել ընդհանուր գործին:

Պապի օգնականը, կարդինալը կարող է
ինքնուրոյն, հանձնարաւոր մարդ լինել, բայց
ինքն պապը պիտի անշան գլուխ լինի, որ
ենթարկվել ընկերութեան ազդեցութեանը:

Եթէ ոչ, կարող է պատահել այն, որ կա-
թոլիկութեան մէջ մի անգամ արդէն պա-
տահած էր: Պապը անխախտ բնաւորութեան
տէր մարդ լինելով, կամեցաւ ոչնչացնել եզուիտ-
ների միաբանութիւնը, որին ինքն պարտա-
կան էր իր նշանակութեամբ:

Այդ է պատճառը, որ եղուիտների աշա-
կերաններից մի քանիսը, որք քիչ շատ ան-
կախ բնաւորութիւն ունեցած են, հալած-
ված են եղել միշտ նոյնանից, և վերջը իրանց
ուսուցիչների անհաշտել թշնամիները դա-
ռած են: Յրանսխաղի Վօլտերը եզուիտ-
ների աշակերտ է եղել,—և նա նոյն ամե-
նամեծ թշնամի էր դառնել յետոյ գերմա-
նացի Հէյնէ, իսկ նորերում և Ֆրանսիացի
Գամբէթիան:

Հասկանալի է որ այդ երկու կուսակցու-
թիւնների մէջ, եզուիտների և ռաւակա-
պեալականների մէջ պիտի մի անգամ ծա-
գէր հասարակական բացարձակ պատերազմը:

Որքան որ եզուիտներին ատել է կարգից
դուրս, նշանաւոր բնաւորութեան տէր մար-
դը, այնքան ռաւակապեալական կուսակցու-
թիւնը այդ տեսակ մարդկերանց ծնունդը
իր համար պարծանք է համարում:

Եզուիտները, երբ երևում է իրանց ընկե-
րութեան մէջ կարգից դուրս, անկախ, նշա-
նաւոր բնաւորութեան անձը, որ բարձրա-
նում է ընդհանուր մակերևոյթից,—իսկոյն
աշխատում են վար գցել նորան, ոչնչացնել,
որովհետեւ նա նոյն համար վտանգաւոր
երեւոյթ է:—Ռաւակապեալական կուսակցու-
թիւնը քիչ շատ նշանաւոր մարդկերանց
իսկոյն նկատում է, առաջանում է, բարձրա-
նում է որովհետեւ նա չէ վախենում մրցու-
թենից, և մրցութիւնը նորա համար կեանք է:

Միին սկզբունքն են. անշարժութիւն,
կրաւորականութիւն, ստրկութիւն:

Միւսի դրոշմն է. անհատութիւն
ազատութիւն, մրցում:

Ժ. Ե. ՆԱՄԱԿ
Պարոն Բաժնիի ուղեւորութիւնից Պարս-
կաստանում:

Մար-Շիմոնի արժու ժառանգական է. եպի-
կոպոսապետ ընտրվում է միշտ մի և նոյն տունից,
նոյն խորը է կոչվում են Մար-Շիմոններ և
և սկսեալ առաջին սուրբ Սիմոնի օրից պահպա-
նում են այդ անունը:

Եպիկոպոսապետի ընտրութիւնը լինում է իւր
մօր արգանքից: Նորան ծնելու ուխտուած կինը,
մինչև իւր օրովանի պտուղը աշխարհ անելը, միս չէ
ուտում: Ծնունդը աշխարհ գալէն յետոյ,—իհարկէ
եթէ նա արու էր,—համարվում է ժառանգը սուրբ
աթոռի:

Պատրիարքի մահից յետոյ ժառանգը բռնում է
նորա տեղը, որքան և հասակով մանուկ լինէր նա:
Որպէս այդ վերջին Մար-Շիմոնը արժու է նստել,
օրպէս լսեցի, իւր տան և ութ տարեկան հասա-
կում:

Մար-Շիմոնը ունի լիակատար իշխանութիւն
իւր ժողովրդի վերայ: Նա է նշանակում նորանց
կառավարող իշխանները, նա վճարում է նոյն մէջ
ծագած գլխաւոր վճեքը: Նա ստանում է ամէն
մի ծովից մասնաւոր նուէրը:

Վերջին արիւնահեղ պատերազմից յետոյ, Բա-
ղրիսան-բէկի հետ այժման պատրիարքի հօր
ժամանակով, թէ Զօյաւթիկը բոլորովն չընկ-
նեցաւ, բայց նա ստիպուեցաւ ամէն տարի մի որո-
շեալ տուրք վճարել Տաճկաստանի կառավարու-
թեանը: Այս տուրքը ինքը Մար-Շիմոնը հաւարել
է տալիս իւր ժողովրդից, յուղարկում է Վանայ
փաշային, ամենին թող չը տալով Օսմանցի պաշ-
տօնակալներին ոտը կոխել իւր երկրի վրայ:

Զօյաւթիկը խիստ լեռնային լինելով, նա շատ
անպէտք է երկրագործութեան համար: Բայց նա
ունի անասնապահութեան բոլոր հարմարութիւն-
ները: Եւ վերջինը ապահովում է բնակիչների ապ-
րուտի պիտոյքները:—Զուրօի հազուատը ոտքից
ցցուել, մինչև անգամ նորա ոտնամանները, լաղ-
կացած են չալիք, մաղիք և բուրդից: Տնային բը-
նաչորիք, օրիցներ, և այլն, նոյնպէս այդ նիւթ-
րից են պատրաստվում: Այդ բոլորը արուեստա-
գործվում է կանանց ձեռքով: Թէ և նոյն պատ-
րաստվում են շատ կոպիտ կերպով, միայն ունեն
այն ամրութիւնը, որ կարող էին երկար դիմանալ:

Տղամարդիքը աշխատութեան մէջ աւելի ծոյլ
են: Նոյն սկսում են թէք ընկնել միմեանց մօտ,
ծխել, և շատախօսել: Նոյն կանայքը ասում են,
„միք ստեղծուած եմք գործելու, իսկ տղամարդը
պիտի պահպանէ իւր զօրութիւնը թշնամու դէմ
կռուելու“:

Թէ և Զուլօն ամէն տարի իւր բաժով բրում է
մի փոքր տարածութիւն ծաղկերից ազատ հող մի
սարի կողքում, ցանում է այնտեղ իւր սերմը, և
թողնելով Աստուծոյ կամքին, դառնում է տուն: Եթէ
եղանակը անցանում էր անձեւային, նորա հունձը
յաջողվում է: Կանայքը ձեռքով արմատախիլ են
անում փոքրիկ արտը, իւրեքներ են կապում, և
չալկած, բրում են տուն: Տան դրան անջև նորա
ձեռքով ձեռնում են իւրեանց ազգաթիւն կալը և
մաքրում են ցորենը: Այդպիսի անտանիլի դը-
ժուարութիւններով ստացած հողի բերքը, իհարկէ
բոլորովն չէ ապահովում նոյն ուսուցիչը, այդ
պատճառաւ ցորենի նորա ըստ միմի մասին ստա-
նում են արտասահմանից, փոխելով նորան իւ-
րեանց երկրի բերքին հետ, որպիսի են—բուրբ,
մորթի, գարմախու քմիք, թուղ, մեղր և կիտոր:

Զուլօնիքի կեանքի պատկերները, նոյն ապ-
րուտի ձեռքը, շատ նման են Փոլոնիին: Միայն
որքան Փոլոնիքը աւագակ են և յափշտակող, այն-
քան դոքա ազնիւ են և պարզամտ: Զուլօն բը-
նաւորութեամբ խիստ յանդուգն է, դիւրագրիւ
և բարկացող: Նա երբ ստիպուեցաւ մերկացնել
իւր խնջալը, առանց հակառակորդին զարկելու
իւր պատնեւում չէ դնում: Այդ պատճառաւ մար-
դասպանութիւնը այստեղ մի սովորական դէպք է:

Զուլօնիքի դէմը գծագրութիւնը, ամենայն ճը-
տութեամբ պահպանել է իւր սիրեական տիպը,
նոյն նրբակալով, բարձրահասակ կանայքը, ինձ
յիշեցնում են միւս Համիրամին, այն համեմատու-
թեամբ միայն, որքան նիւուէացի թագուհին վա-
վաշտ էր, դոքա այնքան ողջախոս և անմեղ են:

Ամբողջ Զօյաւթիկում են չը տեսայ ոչ մի ու-
սումնարան, միայն հանդիպեցի մի քանի ռաբի-
ների, որք իւրեանց տներում պատրաստում էին
սիրացունք և քահանայացուներ:

Կրօնական սէրը մնացել է այստեղ իւր նախ-
կին ջերմութեան մէջ: Զուլօն թէ և ոչինչ դիտալ-
ցութիւն չունի: Նետտրի վարդապետութիւնից,
այսու ամենայնիւ նա իւրեան կոչում է նետտրա-
կան: Նոյն եկեղեցական ծիսապաշտութիւնը խիստ
պարզ է: Ժամատացութիւնը կատարվում է Ասորոյ
հին, ժողովրդին անհասկանալի լեզուով: Երաժշ-
տութեան եղանակները շատ նման են մերինին:

Ժամատան տաճարը չէ զարդարուած պատկեր-
ներով, որով նա իւր արտաքին ձեռք շատ նման
է բողոքական եկեղեցիների ժամատաներին: Իսկ
տաճարների շինուածքը մեր հին վանքերի շինուածքի
ձեռքը ունին:

Մի ամբողջ շաբաթ են ճանապարհորդեցի Զօ-
լաւթիկը: Իմ դուրս գալու միջոցին են վերջին

Խմբագիր—Հրատարակող Ք. Բ. Ա. Բ. Լ. Թ. Բ. Ե. Զ.